# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱԶ ՍՊԸ-ն ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ԱՐԼԻՎԱԶ ՍՊԸ | Յուղակայուն ամառային կոստյում | Յուղակայուն ամառային կոստյում | ԱՐԼԻՎԱԶ ՍՊԸ | Յուղակայուն ամառային կոստյումը բաղկացած է երկարացված բաճկոնից և տաբատից: Կոստյումը պետք է կարվի պոլիեսթերաբամբակային յուղակայուն, ջրակայուն կտորից: Կտորի բաղադրությունը 40% բամբակ, 60% պոլիեսթեր, մակերեսային խտությունը 245±2 գ/մ²: Թելերի քանակը 10 սմ վրա ըստ հիմքի պետք է կազմի 430± 5, ըստ միջնաթելի 175 ± 5, 50 x 200մմ չափսի կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 2000Ն, ըստ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միջնաթելի ոչ պակաս 500 Ն, կտորի յուղակայունությունը նախնական տեսքում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո յուղակայունության ցուցանիշը չպետք է փոխվի: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել ± 2.0 %, ըստ միջնաթելի ոչ ավել ± 2.0 %: Գունային համադրությունը` մուգ կապույտ գույնը համադրված կարմիր գույնի հետ (Գունային երանգները պարտադիր համաձայնեցնել Պատվիրատուի հետ): Բաճկոնի ուսագոտուց մինչև դաստակը պետք է կարված լինի 10սմ լայնքով կարմիր երիզ: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ տեսականու չափսի մասին նշումով, թևքերը` երկարաթև, դաստակի հատվածում 5,5 սմ լայնությամբ ռետինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է շղթայով, կոճկելուց շղթան թաքնվում է արտաքինից արտաքին կափույրի տակ և չի երևում: Բաճկոնի կողային հատվածում տեղադրված է 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկարված գրպան, որոնք թեքված են դեպի ներս, կենտրոնական կոճկվածքի նկատմամբ 550 թեքությամբ, իսկ կրծքային ձախակողմյան հատվածում մեկ վրադիր ծավալային գրպան: Բաճկոնի կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է 2.5 – 3 սմ լայնությամբ մանժետով: Գրպանները մշակված են սև գույնի բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2: Կրծքային գրպանը փակվում է կպչունային փականներով: Կրծքային գրպանի արտաքին մասում ներսի կողմից ուղղահայաց կարմիր երիզ պետք է լինի: Կրծքային գրպանից վերև ընկած հատվածում պետք է կարված լինի հորիզոնական 5սմ-ոց լայնքով, բաց մոխրագույն A որակի լուսարձնդրադարձնող ժապավեն, որին համապատասխան թիկունքի ամբողջ երկայնքով և թևքերում նույն ժապավենից պետք է լինի: Լուսարձնդրադարձնող ժապավենի լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м$^2$ ) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 կդ/(люкс·м$^2$ ) ցուցանիշից: Բաճկոնի գոտկատեղում մշակված է գոտի, որի մեջ տեղադրված է 5-6 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված բաճկոնի չափսը կարգավորելու համար: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով կամ ասեղնագործման եղանակով դաջվում է ընկերության անվանումը: Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 ներկարված կողային գրպաններով, որոնք մշակված են սև գույնի բամբակյա աստառից: Աստառի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2: Տաբատի ներքևի ծնկային հատվածում տեղադրված են 2 վրադիր ծավալային, ձևավոր գրպաններ՝ կափույրներով: Վրադիր գրպանների բարձրությունը ոչ պակաս 21 սմ, լայնությունը ՝ ոչ պակաս 18 սմ: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ |

տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, որոնց լուսանդրադարձման գործակիցը լուսավորման անկյան տակ չպետք է պակաս լինի 500 кд/(люкс·м² ) ցուցանիշից, իսկ 20 /քսան/ անգամյա լվանալուց հետո՝ 400 кд/(люкс·м² ) ցուցանիշից: Արտահագուստի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված հատուկ զույգ կարի մեքենայով, բոլոր վրադիր գրպանների, կափույրների միացման հատվածներում պետք է լինեն ամրակարեր՝ մշակված հատուկ ամրակարի մեքենայով: Փաթեթավորումը պետք է լինի թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ լինի մի կոմպլեկտ, տոպրակները լինեն պիտակավորված, իսկ պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը,

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակը և չափսը: |